ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Հայաստանի Հանրապետության Վաղարշապատի համայնքապետարանի ենթակայության երաժշտական և գեղարվեստի դպրոց ՀՈԱԿ-ներում 2025 թվականի տեղական վճարների գծով արտոնություններ սահմանելու, արտոնություններ կիրառելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկն ու տեղեկությունները սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ավագանու որոշման նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պետական փորձագիտական եզրակացությամբ արված դիտողությունների և առաջարկությունների

1. Արդարադատության նախարարություն	09.12.2024թ. №//27.4/49900-2024 գրության
«Հայաստանի Հանրապետության Վաղարշապատի համայնքապետարանի ենթակայության երաժշտական և գեղարվեստի դպրոց ՀՈԱԿ-ներում 2025 թվականի տեղական վճարների գծով արտոնություններ սահմանելու, արտոնություններ կիրառելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկն ու տեղեկությունները սահմանելու մասին» ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ավագանու որոշման նախագծի նախաբանում Վաղարշապատ համայնքի ավագանու որոշմանը կատարած հղումը անհրաժեշտ է վերախմբագրել՝ համապատասխանեցնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներին, համաձայն որի՝ «Ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի լրիվ անվանումը հիշատակելիս դրանում հետևյալ հաջորդականությամբ ներառվում են այդ ակտն ընդունող մարմնի անվանումը, ընդունման տարին, ամիսը (տառերով), ամսաթիվը, ակտի վերնագիրը, ակտի հերթական համարը, բնույթը և տեսակը: Ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի կրճատ անվանումը հիշատակելիս դրանում հետևյալ հաջորդականությամբ ներառվում են այդ ակտն ընդունող մարմնի անվանումը, ընդունման տարին, ամիսը, ամսաթիվը, ակտի հերթական համարը, բնույթը և տեսակը:»:	Ընդունվել է.